



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՅՑ
Հատոր 2, համար 1, 2008թ.



www.ysmu.am

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԲՈՆԿՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ (1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ)

Մայրապետյան Ա. Խ.

ՀՀ, Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի ԳՀԿ

Ամփոփում

Հայտնի է, որ ավերիչ տարրերային աղետները, այդ թվում նաև երկրաշարժերը, հանգեցնում են բարդ էկոլոգիական, սոցիալ-հիգիենիկ և համաճարակային իրավիճակների: Դրանք, իրենց հերթին, պատճառ են հանդիսանում վարակիչ հիվանդությունների բռնկումների (այդ թվում նաև առավել վտանգավոր վարակների), զանգվածային թունավորումների առաջացման և այլն: Համաճարակային բռնկումները, որպես կանոն, ուղեկցվում են տարրերային աղետներով:

Ճգնաժամային իրավիճակներում վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վրա ազդեցություն ունեցող գործոններից են՝ ոչ վարակման բնույթի ախտահարման մասսայականությունը, համակցված ախտահարման գերակշռումը, հոգեկան սթրեսները, սոցիալական կառույցների ապակազմակերպումը, ինտենսիվ միգրացիոն գործընթացները, էկոհամակարգի խանգարումը:

Հայաստանում 1988թ. երկրաշարժի գոտում ստեղծված էին բոլոր պայմանները համաճարակային բարդությունների առաջացման համար.

- մարդկային մեծ բազմություններ ոչ մեծ, չհարմարեցված հրապարակներում՝ սանիտարա-հիգիենիկ պայմանների լիակատար բացակայությամբ,
- ջրամատակարարման, սննդի արդյունաբերության, հանրային սննդի և առևտրի համակարգերի, կոմունալ-կենցաղային սպասարկման ոլորտի խանգարում կամ ամբողջական քայքայում,
- շրջակա միջավայրի հակասանիտարական վիճակ:

Հայաստանում, ինչպես աշխարհում ոչ մի տեղ, երկրաշարժի հետևանքով ստեղծված աղետալի իրավիճակը միահյուսվում էր այնպիսի այլ հզոր գործոնների հետ, ինչպիսիք են՝ պատերազմը, հանրապետության տնտեսական, էներգետիկ և հեռահաղորդակցման շրջափակումը, որոնք զգալիորեն բարդացնում էին առանց այդ էլ ծանր իրավիճակը:

Սակայն չնայած մեծ ռիսկի առկայությանը, չեն գրանցվել համաճարակային բռնկումներ, խմբակային վարակիչ հիվանդություններ և սննդային թունավորումներ, ինչը հնարավոր դարձավ միայն ճիշտ ընտրված մարտավարության, կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումների հստակ իրականացման շնորհիվ:

1988թ. Հայաստանի երկրաշարժի գոտում տարրերային աղետի հետևանքների աշխատանքի փորձի ուսումնասիրությունը մեծ գիտական և գործնական նշանակություն ունի նաև բնակչության հակահամաճարակային անվտանգության ապահովման համակարգի մշակման համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային պրակտիկայում նման մշակումներ չկան:

Հանգուցային բառեր. տարրերային աղետ, էկոլոգիա, հիգիենա, համաճարակ, կազմակերպություն, ջրամատակարարում, վարակ, կանխարգելում, հիվանդացություն: